ՍՈՑԻՈԼՈԳԻԱ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԴԻՍԿՈՒՐՍԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԳԱԳԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Արդի հասարակագիտական տարբեր հրապարակումներում, զանգվածային լրատվամիջոցներում և հանրային դիսկուրսում «քաղաքացիական հասարակություն» հասկացությունը բավական հաճախ կապվում է ժողովրդավարության հայեցակարգերի հետ: Այդ խնդրին անդրադարձել են նաև որոշ հայ հեղինակներ[1]: Ներկայիս լիբերալ-ժողովրդավարական մոտեցումների համատեքստում քաղաքացիական հասարակության կայացումը դիտվում է որպես ժողովրդավարացման հիմնարար բաղկացուցիչներից մեկը, եթե ոչ՝ ժողովրդավարացման գործընթացի համարժեքը: Այս առնչությամբ XX դարի հայտնի գիտնականներ Գաբրիել Ալմոնդն ու Սիդնեյ Վերբան քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) և ժողովրդավարության փոխառնչությունը բացատրում են քաղաքացիականի ու քաղաքականի ընդհանրությամբ: Նույն համատեքստում հեղինակները կարևորում են քաղաքական մշակույթի կենսական նշանակությունը ժողովրդավարական կարգերի ձևավորման գործում: Մասնավորաբար, նրանց համոզմամբ քաղաքացիական կազմակերպությունների՝ քաղաքական տարրերը ձևավորում են քաղաքական գիտակցություն՝ նպաստելով քաղաքացիների տեղեկացվածության բարձրացմանը, ինչը դրական ազդեցություն է ունենում ընտրական և առհասարակ քաղաքական մասնակցության գործընթացների վրա[2]: Ավելի ուշ Ռոբերտ Փաթնեմը հանդես է եկել առավել տարբերակված մոտեցումներով: Վերջինս ուշադրություն է հրավիրում քաղաքացիական հասարակության ապաքաղաքական կազմակերպությունների գործունեությանը՝ դա ևս համարելով ժողովրդավարության ամրապնդման կենսական նախապայման: Փաստորեն, Ռոբերթ Փաթնեմն ընդգծում է ՔՀ բաղադրիչների գործառության հասարակական հետևանքները: Այս համատեքստում Փաթնեմը

---

[1] Տե՛ս **Ա. Ալեքսանյան,** Ցիվիլիարխիկ դեմոկրատիա // Քաղաքացիական հասարակության կայացման նախադրյալները Հայաստանում, Եր., 2005, էջ 85-94, **Ա. Բեգլարյան**, Պետության և քաղաքացիական հասարակության համագործակցության առանձնահատկությունները Հայաստանում և ազգային անվտանգությունը // «21-րդ դար», թիվ 1 (53), 2014, Եր., էջ 94-97:

[2] Տե՛ս **Almond, G. A. and Verba, S.** The Civic Culture: Political Attitudes and Democracy in Five Nations. Princeton, 1989, էջ 338-340:

նկատում է, որ ՔՀ կազմակերպությունների գործունեությունը հանգեցնում է սոցիալական կապիտալի կազմավորմանը և դրանով իսկ՝ վստահության ու փոխընդունելի արժեքների ձևավորմանը, ինչը հետագայում, փոխադրվելով քաղաքական հարթություն, նպաստում է հասարակությունում միասնության և ներառականության մակարդակի բարձրացմանը[3]: Սակայն ակնհայտ է նաև, որ ՔՀ և ժողովրդավարության հայեցակարգերը, անկախ նկատելի համընկնումներից, ծագումնաբանական տարբեր ճանապարհներ են անցել և ժամանակի ընթացքում տարբեր տեսական իմաստավորումներ են ստացել: Ըստ այդմ՝ այս երկու հասկացությունների՝ առաջին հայացքից նախատրված միասնությունը առաջ է բերում մի շարք առանցքային հարցեր: Մասնավորապես հետաքրքրություն է ներկայացնում այն, թե հասարակական, պատմաքաղաքական ինչ համատեքստում է տեղի ունեցել ՔՀ և ժողովրդավարացման հայեցակարգերի համադրումը, և ինչ տեսական մոտեցումներ են գերակշռում այս երկու հայեցակարգերի հաղորդակցական տիրույթում:

Նշված հարցադրումներից ելնելով՝ հետաքրքիր է պարզել, թե ինչպես են կապվում ՔՀ-ն և ժողովրդավարացումը ՔՀ ժամանակակից հայեցակարգերում, և ինչ կառուցակարգեր են ուրվագծվում այս երկու հասկացությունների փոխազդման տիրույթում:

Այս շրջանակներում կարևոր է նշել, որ ժողովրդավարության արդիականացումը ՔՀ հայեցակարգերի կայացման տարբեր փուլերում տարբեր արտահայտություններ է գտել: Մասնավորաբար, լուսավորական շրջանի տեսաբանները (Ջոն Լոք, Ադամ Սմիթ) ՔՀ-ն չեն դիտել իբրև ֆորմալ ժողովրդավարացման բաղկացուցիչ, այլ հատկանշել են որպես հասարակության անդամների միջև ազատ փոխանակման դաշտի ձևավորման կարևոր հարթակ, որն իր հերթին, հակազդելով ֆեոդալական հասարակարգի կազմակերպման սկզբունքներին, պետք է հնարավորություններ ստեղծեր կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար: Ըստ վերոհիշյալ մտածողների՝ ՔՀ կազմավորումը միտված էր անհատի ազատությունների և ինքնիշխանության կայուն շրջանակների ստեղծմանը և, որպես այդպիսին, պետության ժողովրդավարացման նպատակ չէր հետապնդում: Սակայն հետարդյունաբերական, իսկ հետո նաև հետպատերազմական շրջանում դրսևորված հասարակական, պատմաքաղաքական և մշակութային տեղաշարժերը ՔՀ և ժողովրդավարության կապը կառուցվածքային նշանակալից փոխակերպումների են ենթարկում:

Այս փոխակերպումների սկզբնավորումը մեծաթիվ տեսաբաններ կապում են քսաներորդ դարի ութսունական թվականների սկզբին դրսևորված՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հակակոմունիս-

[3] Տե՛ս **Robert D. Putnam, Robert Leonardi, Raffaella Y. Nanetti**. Making Democracy Work: Civic Traditions in Modern Italy. Princeton, 1994, էջ 122:

տական քաղաքացիական շարժումների հետ, որոնց հիմքում քաղաքացիական հասարակության տեսական նոր վերաիմաստավորումներն էին: Նոր հայեցակարգերի ձևավորումը բնորոշվեց ՔՀ շուրջ նոր դասական, ինչպես նաև նոր մարքսիստական ըմբռնումներով: Այս շարժումների համատեքստում ՔՀ-ն դիտվում է որպես նոր մտածողության արտահայտություն, որն առանց նահանջելու ժողովրդավարական սկզբունքներից պետք է օգներ շարունակելու ընդվզումը պետական իշխանությունների դեմ: Քաղաքացիական հասարակության դաշտի ձևավորման միջոցով ժողովրդավարացման ծրագիրը պահանջում էր անցում դասական այլընտրանքներից (բարեփոխում, հեղափոխություն) անդին: Այս դիրքորոշումը պաշտպանող մտածողների թվում էր հունգարացի սոցիոլոգ, քաղաքագետ Էնդրյու Արատոն, ով, հիմնվելով Հաբերմասի հայացքների վրա, ՔՀ մոդելի իրացումը գլխավորապես տեսնում էր սահմանադրական փոփոխությունների եղանակով: Նրա կարծիքով, անհատական ինքնավարությունը և հանրային ազատությունները ամրապնդելու համար ՔՀ դաշտում պետք է ներառվի օրենքների, իրավունքների և իրավապաշտպան ինստիտուտների ողջ հավաքակազմը[4]: Իրավական երաշխիքներով պատսպարված ՔՀ-ն, ըստ Արատոյի, պետք է կառուցակարգեր զարգացներ քաղաքական և տնտեսական ինստիտուտների վրա ազդելու համար, ինչպես նաև ունենար ինքնակազմակերպման ունակություն՝ օգտագործելով զանգվածային լրատվական միջոցները հասարակական հաղորդակցության աճի խթանման և հասարակական հարաբերությունների ամրացման համար: Մյուս կողմից՝ Արատոն և նրա համախոհները հրաժարվում են Մարքսի ծայրահեղական մոտեցումներից՝ համարելով, որ ընդդիմադիր շարժումները պետական իշխանության նվաճման նպատակ չեն հետապնդում, այլ միտված են ազատականացնելու ՔՀ-ն՝ խթանելով համերաշխության ձևերի ամրակայումը և հանրության ժողովրդավարական մասնակցությունը: Այս ամենից կարելի է ենթադրել, որ այս շրջանի ՔՀ հայեցակարգերը, հիմքում ունենալով Մարքսի սոցիալիստական հայացքները և շեշտադրելով տնտեսական համակարգի վրա ազդելու խնդիրը, ինչպես նաև համընդհանուր շահը, մի կողմից մոտենում են սոցիալական ժողովրդավարության դրույթներին, մյուս կողմից անհատների ինքնորոշման և ապաքաղաքական հանրային դաշտի ձևավորման անհրաժեշտության ընդգծմամբ՝ մոտենում են ժողովրդավարացման ազատական դրույթներին: Ընդհանուր առմամբ, քաղաքացիական հասարակությունը երկու դեպքում էլ արդիականացվում է որպես ժողովրդավարության տեսության հիմնարար բաղկացուցիչ: Այդուհանդերձ, այս տեսական մոտեցումներում որքան էլ նշմարելի է դառնում ՔՀ և ժողովրդավարության հայեցակարգերի կապակցման

[4] Տե՛ս **Arato A.** From Neo-Marxism to Democratic Theory: Essays on the Critical Theory of Soviet-Type Societies. NY, 1993, էջ 71-73:

շրջանակների ուրվագծումը, այնուամենայնիվ, ՔՀ կայացման գործընթացը ուղղակիորեն չի կապվում ժողովրդավարության հետ:

Այլ պատկեր է ձևավորվում ՔՀ հայեցակարգերի իմաստավորման հաջորդ ալիքի ընթացքում, որ սկզբնավորվում է 1989 թ.՝ կոմունիստական համակարգի կազմալուծմամբ և նորանկախ երկրների ժողովրդավարացմամբ: Այս պատմական գործընթացներով փաստորեն սկզբնավորվում է ՔՀ նոր դասական և նոր մարքսիստական վերընթերցումներից անցումը դեպի ՔՀ լիբերալ-ժողովրդավարական հայեցակարգեր: Նոր փուլը հատկանշվում է նրանով, որ կենտրոնաձիգ, հովանավորչական-հրամայական պետական համակարգի ապակառուցման և նորանկախ պետություններում ժողովրդավարական ուղենիշների նախանշման պարագայում ՔՀ հայեցակարգը դադարում է դիտվել որպես պետական իշխանության դեմ ուղղված հանրային դաշտի կերտման և անհատական ինքնիշխանության նվաճման գործընթաց և սկսվում է արդիականացվել որպես հասարակությունում ազատական ինստիտուտների ամբողջություն: Միևնույն ժամանակ, այս փուլում ՔՀ հայեցակարգերը ավելի սերտ են կապվում ժողովրդավարացման գործընթացի հետ, քանի որ այն խնդիրները և նպատակադրումները, որոնք մշակվում են ՔՀ ինստիտուտների նախաձեռնությամբ, ամբողջապես համադրելի են դառնում ժողովրդավարական կարգի ձևավորման գործընթացի հետ: Մյուս կողմից՝ ՔՀ լիբերալ-ժողովրդավարական հայեցակարգերը, բավականաչափ հեռանալով լուսավորական շրջանի ազատականության հիմնադրույթներից և ՔՀ սկզբնավորման հիմքերը տեղակայելով պետությունից դուրս, այնուամենայնիվ գործում են պետության հետ փոխազդեցության դաշտում: Մասնավորապես քաղաքացիական հասարակությունը օժանդակ գործառույթ է ստանձնում ժողովրդավարության նկատմամբ՝ փորձելով կազմակերպել պետական իշխանությունն ըստ հասարակական շահերի: Այս համատեքստում արդիական են դառնում իշխանության վերահսկման, հաշվետվողականության, հանրության համար պետության հասանելիության, պետության մենաշնորհի կանխման և ներքևից ուղղորդվող քաղաքական օրակարգի ձևավորման գործընթացները:

Սակայն քաղաքացիական հասարակությանը ինստիտուցիոնալ կարգավիճակ վերագրող լիբերալ-ժողովրդավարական դիսկուրսը ևս ի հայտ է բերում մի շարք սահմանափակություններ: Անդրադառնալով ստեղծված իրավիճակին՝ ժամանակակից քաղաքական տեսաբան, սոցիոլոգ Գիդեոն Բաքերը ՔՀ լիբերալ-ժողովրդավարական դիսկուրսը համարում է ռեդուկցիոնիստական՝ գտնելով, որ այն ներկայումս գլխավորապես կենտրոնացել է պետության վերահսկման և իշխանության բաժանման նպատակադրումների շուրջ, որի պայմաններում ՔՀ-ն ներկայանում է որպես ինստիտուցիոնալ մի հավաքակազմ, որի դերը դառնում է որոշակի ստատուս քվոյի պահպանությունը: Ուստի

Բաքերն եզրակացնում է, որ լիբերալ-ժողովրդավարական դիսկուրսը ներկայումս շրջափակել է ՔՀ մեկնաբանման դաշտը[5]: Ասվածից կարելի է ենթադրել, որ ՔՀ ընթացիկ իրականությունը զերծ չէ որոշ ներքին հակասություններից, քանի որ ՔՀ-ն, իր հայեցակարգում որպես առանցքային սկզբունք ընդգրկելով պլյուրալիստական հարաբերությունների ձևավորումը, այնուամենայնիվ գործառում է գլխավորապես մեկ գաղափարախոսության գերակայության պայմաններում: Այս իրավիճակում խնդիր է առաջանում՝ արդյոք հնարավոր է քաղաքացիական հասարակության ներքո պատկերացնել կազմակերպչական մի մոդել, որը զերծ կլինի իշխանական հարաբերություններին բնորոշ աստիճանակարգված կառուցվածքից և դրանից բխող՝ գերիշխման ու ստորադասման ուղղահայաց դերաբաշխումից:

Այս խնդրի շրջանակներում հատկանշական են Ռալֆ Դարենդորֆի մոտեցումները, ով քաղաքացիական հասարակությունը դիտում է որպես ստեղծագործական քաոսի մի դաշտ, որտեղ որևիցե գաղափարախոսություն մենաշնորհյալ կարգավիճակ չպետք է ունենա: Նա ՔՀ-ն նկարագրում է որպես միութենական, ընկերակցական կազմավորումների մի հարթակ, որտեղ քաղաքացիների միջև պետք է գործեն բացառապես հորիզոնական հարաբերություններ: Անդրադառնալով ժողովրդավարության և ՔՀ առնչությանը՝ Դարենդորֆը նշում է, որ XX դարի վերջին սառը պատերազմի կանխարգելմանը և նոմենկլատուրային համակարգերի կազմալուծմանը հաջորդած ժողովրդավարական կարգերում ստեղծվում է անոմիկ մի իրավիճակ, երբ նախկին կապանքներից ձերբազատված անհատը բաց հասարակության պայմաններում դժվարանում է գտնել իր տեղն ու դերը: Հենց այստեղ է նա հատկանշում ՔՀ-ի կառուցողական դերը, որը ժողովրդավարության և դրա ընձեռած ազատությունների պայմաններում պետք է քաղաքացիներին վերադարձնի պատկանելության զգացումը և համալրի նրանց կյանքը նոր նշանակություններով: Խնդրի լուծումը նա տեսնում է ՔՀ դաշտում մարդկանց շաղկապող տարբեր միությունների, կազմակերպությունների (ներառյալ նաև մանր և միջին բիզնեսը) ձևավորման և դրանց ակտիվ գործառման ճանապարհով[6]:

Ընդհանրացնելով կարող ենք հաստատել, որ քսաներորդ դարի երկրորդ կեսին քաղաքացիական հասարակության հայեցակարգերը զարգացել են գլխավորապես ժողովրդավարության երկու դիսկուրսների համատեքստում: Դրանցից առաջինը սկզբնավորվել է Արևելյան Եվրոպայում հակակոմունիստական շարժումների վերելքով: Այն, իր հիմքում ունենալով Մարքսի սոցիալիստական մոտեցումների և ՔՀ դասական հայեցակարգերի վերակառուցումը, բնորոշվել է հիմնակա-

[5] Տե՛ս **Gideon Baker**. Civil Society and Democratic Theory: Alternative Voices. Abingdon, 2002, էջ 70-72:

[6] Տե՛ս **Ralf Dahrendorf** . Civil Society, // Common purpose journal, 1992, էջ 8-9:

նում սոցիալ-ժողովրդավարության տարրերով և դիտվել է որպես պետության հակակշռման այլընտրանքային, ոչ բռնի, սահմանադրական նորմերին համաչափ գործընթաց:

ՔՀ հայեցակարգերի հաջորդ վերափոխումը նախանշվել է ԽՍՀՄ երկրների անկախացմամբ և դրանցում սկիզբ առած ժողովրդավարացման գործընթացներով: Այս փուլում ՔՀ հայեցակարգերը զարգանում են լիբերալ-ժողովրդավարության մոտեցումների շրջանակներում: Այս դեպքում ամբողջատիրական վարչակարգերի կազմալուծումը փոփոխում է ՔՀ–պետություն հարաբերությունների շուրջ ձևավորված նախկին ըմբռնումները. պետությունը այլևս չի դիտվում որպես ՔՀ-ի համար ուղղակի վտանգ և բռնաճնշման սուբյեկտ: Հետևաբար փոխվում է նաև ՔՀ նախկին՝ հակազդման գործառական նշանակությունը նոր՝ ինստիտուցիոնալ նշանակությամբ և համալրվում է լիբերալ-ժողովրդավարության նոր արժեքներով (պլյուրալիզմ, համահավասարություն, հաշվետվողականություն, թափանցիկություն):

Վերոնշյալ պայմաններում ՔՀ-ն ձեռք է բերում հասարակական կյանքում նոր իմաստներ ստեղծելու, ինչպես նաև միությունները, ընկերությունները և քաղաքացիական արժեքները համընդգրկող օրակարգ ձևավորելու նշանակություն:

Այնուամենայնիվ, որոշ հեղինակների կարծիքով, հետխորհրդային երկրներում քաղաքացիական հասարակության դերն ու գործառույթները առաջ են բերում մի շարք հարցեր: Մասնավորապես գերակշռող է դառնում այն համոզմունքը, ըստ որի՝ ժողովրդավարության ներկայիս պայմաններում ՔՀ-ն, ձերբազատվելով իր նախկին նորմատիվ, գործուն բնույթից (նոր դասակարգերի մեկնաբանություններում), վերածվել է վերլուծական և քննադատական գործիքի[7]:

Հայաստանյան հետխորհրդային իրականությունը նույնպես բնորոշվում է անցումային գործընթացներով: Այս պարագայում, ինչպես հետխորհրդային մյուս երկրների դեպքում, քաղաքացիական հասարակության վերաիմաստավորման և ժողովրդավարության համատեքստում վերջինիս վերակառուցման խնդիրը նոր արդիականություն է ստանում: Այս ուղղությամբ իրականացված դիտարկումները[8] հաստատում են, որ հայաստանյան հասարակության ՔՀ ընթացիկ դիսկուրսում ևս նշանակալի է լիբերալ-ժողովրդավարական հայեցակարգի ազդեցությունը: Նման իրավիճակը, տեղական սոցիալ-մշակութային, էթնիկական որոշ կառուցվածքների հետ ունեցած հակադրումներից զատ, առաջ է բերում նաև ինստիտուցիոնալ բնույթի մի շարք խնդիրներ: ՔՀ դաշտում գործառող հասարակական կազմակերպութ-

---

[7] Տե՛ս **Bibic, A., Graziano G.** Civil Society, Political Society, Democracy. Ljubljana, 1994, էջ 216-217:

[8] Տե՛ս **Ն. Մ. Գայստյան,** Հայաստանում քաղաքացիական հասարակության մոդելի ձևավորման խնդիրը էթնոմշակութային համատեքստում // «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., № 2, 2014, էջ 150-160:

յուններից շատերը դիրքավորվում են որպես ոչ պետական կազմակերպություններ: Քաղաքական մասնակցության մեխանիզմներից շատերը (դիցուք՝ կուսակցություններ ձևավորելը) ոչ միանշանակ են ընկալվում հանրային դաշտում, իսկ պետական համակարգի տարբեր սուբյեկտների հետ համագործակցման ձևաչափերի հարցում առաջ են գալիս լուրջ վերապահումներ, որոնք հիմնականում պայմանավորված են պետական ինստիտուտների վերաբերմունքի կոշտացմամբ և պետական մարմինների հետ գործակցելու դեպքում հեղինակազրկվելու վտանգով: Հետևաբար այս պայմաններում ՔՀ գործառական նշանակության և ժողովրդավարացման համատեքստում ՔՀ դերակատարների մասնակցային արդյունավետության վերաբերյալ առաջ են գալիս որոշ խնդիրներ, քանզի լիբերալ-ժողովրդավարական դիսկուրսի շրջանակներում դեռևս հստակորեն չեն ուրվագծվում այն կառուցակարգերը, որոնց միջոցով ՔՀ սուբյեկտները առարկայական լծակներ կտնօրինեն քաղաքական օրակարգի ձևավորման գործում: Ընդսմին անհրաժեշտություն է առաջանում մշակելու ՔՀ մի այնպիսի մոդել, որը, քննադատական, վերլուծական գործառույթներից զատ, նաև գործառական, կառուցողական արտահայտություններ կգտնի ժողովրդավարական ինստիտուտների զարգացման, այդ թվում նաև պետական քաղաքականության ժողովրդավարացման գործում՝ միևնույն ժամանակ չզիջելով ՔՀ սուբյեկտների ինքնիշխանությունը: Նման մոդելի մշակումը հնարավոր է քաղաքացիական հասարակության դիսկուրսը ներառականության սկզբունքներով կազմակերպելու միջոցով: ՔՀ հայեցակարգը, ներառելով լիբերալ-ժողովրդավարների կողմից կարևորվող պլյուրալիստական հարաբերությունների և անհատի ինքնիշխանության սկզբունքները, պետք է միևնույն ժամանակ ընդլայնի պետական համակարգի հետ փոխհարաբերվելու, այդքանով իսկ վերջինիս վրա ներազդելու կառուցակարգերը, որոնց իրացման հնարավորությունները հասկանալու համար անհրաժեշտ է անդրադառնալ Յուրգեն Հաբերմասի հաղորդակցական համակարգերի ձևավորման և ՔՀ դաշտում դրսևորվող դիսկուրսի ռացիոնալացման գաղափարներին: Այստեղ կարևոր է ընդգծել, որ Հաբերմասը ՔՀ դաշտի կազմակերպման արդյունավետությունը տեսնում է ազատ հաղորդակցման, ակտիվ քննարկումների, փոխզիջումային հիմքերով որոշումների կայացման և ըստ այդմ ռացիոնալ պահանջների ձևակերպման պարագայում[9]: Ըստ այդմ՝ ՔՀ ինստիտուտները հնարավորություն են ստանում ձևավորելու պետական որոշումների վրա ազդեցության մի կառուցակարգ, որը գործառում է պետական համակարգում կայացվող որոշումների վերաբերյալ լեգիտիմության դիկսուրս ձևավորելու և ռացիոնալ հենքերով ձևավորված հաղորդակցական իշխանությունը (*ըստ Հաբերմասի՝ ավան-*

[9] Տե՛ս **Habermas J.** The public sphere: an encyclopaedia article// New German Critique, 3, 1974, էջ 49–55:

դական՝ վարչարարական իշխանության այլընտրանքը) գործադրելու միջոցով:

Այսպիսով, ժողովրդավարացման գործընթացներում քաղաքացիական հասարակության դաշտում գերակայող լիբերալ-ժողովրդավարական դիսկուրսի սահմանափակումները անհրաժեշտություն են առաջացնում ընդլայնելու ՔՀ կազմակերպման շրջանակները՝ ՔՀ հայեցակարգում լիբերալ-ժողովրդավարական մոտեցումների քննադատական, վերլուծական ներուժը զուգակցելով նորդասականության հայեցակարգերում հատկանշվող ՔՀ գործառութային կամ գործիքային նշանակությունների հետ:

Այս եղանակով ձևավորված ՔՀ մոդելը թույլ կտա նոր կառուցակարգեր ստեղծել քաղաքացիական հասարակության և պետության միջև, ինչն իր հերթին կնպաստի քաղաքացիական հասարակության ազդեցության բարձրացմանը պետական քաղաքականության ժողովրդավարացման գործընթացում:

Բանալի բառեր – *քաղաքացիական հասարակություն, իշխանություն, ժողովրդավարացում, նոր դասականություն, լիբերալ-ժողովրդավարություն, դիսկուրս, համերաշխություն, սոցիալական կապիտալ, հաղորդակցական իշխանություն, ռացիոնալություն*

ГАГИК ТУМАНЯН – ***Современные концепции гражданского общества в контектсе дискурса демократизации.*** – Во многих работах по общественным наукам, в средствах массовой информации, а также в общественном мнении идея гражданского общества часто связывается с демократией и демократизацией. В частности, в процессе демократизации либерально-демократическая парадигма, преобладающая в дискуссиях о гражданском обществе, обусловлена расширением его организационных рамок, что подчёркивается в неоклассических концепциях.

Ключевые слова: *гражданское общество, власть, демократизация, неокласицизм, либералная демократия, социальный капитал, коммуникативная власть, рационалность*

GAGIK TUMANYAN – ***Modern Conceptions of Civil Society in the Context of Democratisation Discourse.*** – As we know nowadays in many publications of social sciences, as well as in mass media and public discourse, the idea of civil society often associated with the process of democratization. Thus, in the processes of democratization the limitations of liberalistic paradigm, which dominates in CS sphere, actualize the extension of organizational framework of the CS by combining the critical and analytical potential of liberal democratic discourse with actionalistic and functional meanings, which are crucial in neoclassical conceptions of CS. The model, which is elaborated through this synthesis, will promote a formulation of new mechanisms between CS and governmental institutions, which in turn will increase CS influence on the process of democratization of the governmental policy.

Key words: *civil society, power, democratization, neoclassicism, liberal democracy, discourse, solidarity, social capital, communicative power, rationality*